ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2015 թվականի N 84 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ԽԱՇԹԱՌԱԿ ԵՎ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով << Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2014թ. հոկտեմբերի 28-ի <<2015 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին>> թիվ 27-Ա որոշումը.

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքում համայնքի ղեկավարի, Խաշթառակ և Սարիգյուղ համայնքներում ավագանու հերթական ընտրությունները նշանակել 2015թ. սեպտեմբերի 13-ին:
2. Առաջարկել վերը նշված համայնքների ղեկավարներին.
   Օրենքով սահմանված կարգով ապահովել ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացը:
3. Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Մ. Մխիթարյանին.
   Ընտրությունների նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում համագործակցել թիվ 40 և 41 ընտրատարածքային ընտրական և տեղամասային ընտրական հանձնաժողովների հետ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

19 մայիսի 2015թ.
ք. Իջևան